



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ի Ա. ԷԶՄԻԱԾԻՆ*

3 նոյեմբերի, Երեւաթքի.— Ամբողջ օրը Ա. Էջմիածին անցուցի: Ճաշեցի ուսանողներուն հետ և դասավանդութեանց ներկա եղա:

Ա. Էջմիածնի մեջ վերջին տարիներու ընթացքին կազմված է նոր Զեռագրատուն մը, որ արդեն ունի հարյուրի ավելի ձեռագիրներ: Մեծ մասը աչքի անցուցի. անոնց մեջ մասնավոր արժեք կներկայացնեն Գրիգոր Տաթևացիի կողմէ գրված մագաղաթյա ավետարանը և Սիմեոն կաթողիկոսի անձնական ձեռնագրութեան Մաշտոցը:

4 նոյեմբերի, շոբեջաթքի.— Կեսօրի առաջ այցելեցի քանի մը բարեկամներու և հայրենակիցներու տուներ: Կեսօրի ետք պարտն Հրաչյա Գրիգորյանի հետ գացի կերպասի գործարանը, որ հիմնված է 1951-ին և ունի մոտ 2.000 գործավոր: Տնօրէնը պարտուց մեզ: Բոլոր գույներով և ամեն տեսակի նուրբ բրդեղեն կտորներ կպատրաստվին թե՛ արանց և թե՛ կանանց համար: Տարեկան 2.000.000 քառակուսի մետր կերպաս կարտադրեն: Հետո գացինք Մխաթոտի գործարանը, որ ունի 900 գործավոր և տարեկան կարտադրեն 250.000.000 տոսի սիգարետ, որոնց 80 առ հարյուրը կարտածեն: Գացինք նաև Արարատ գործարանը, որ ունի 600 գործավոր: Հիմա ավելի ընդարձակված է և կարտադրեն տարեկան 10.000.000 լիտր գինի:

5 նոյեմբերի, հինգշաթքի.— Ա. Էջմիածնի սրբութեաններէն Ա. Գրիգոր Լուսավորիչի, Արիստակէս հայրապետի և Բագեոս առաքյալի աջերը նկարեցի, ինչպէս նաև Քրիստոսի փուշէ պատկեն մասունք մը և ա՛յլ թանկարժեք իրեր:

Արփիկ Մինասյանի հետ այցելեցի Երևանի հայոց նախկին գերեզմանոցը, որ 1934-էն ի վեր զրոսայգիի վերածված է: Հոս կգտնվի մեծ վարդապետը, հայ երգին վարպետը՝ Կոմիտաս, որուն գերեզմանին կմոտենամ իբրև սրբավայրի մը, կհամբուրեմ զայն ու «Հողաց» մը կարտասանեմ: Իր շուրջը ամփովված են ա՛յլ մտավորականներ— Հովհաննէս Հովհաննիսյան, Ռոմանոս Մելիքյան, Սպիրիտոն Մելիքյան, Լեո, Թորոս Թորամանյան, Եղիշէ Թադևոսյան, դերասան Հովհաննէս Արեւյան, Շիրվանզադէ, Խնկոտաբեր, Վրթանէս Փափաղյան: Բեյրութէն կհանչնամ վերջնուլս եղբայրը՝ Վահան Փափաղյան: Կրոցեմ մոմ մը իր եղբոր գերեզմանին վրա ու նույնպէս «Հողաց» կարտասանեմ: Մոմին մնացորդը հետս կառնեմ հանձնելու իրեն՝ իր եղբոր գերեզմանէն և Մայր Հայրենիքէն իբրև հիշատակ խնկավելի:

6 նոյեմբերի, ուրբաթ.— Հնութեանց պահպանութեան կոմիտէի գրասենյակը գացի: Քնարիկ՝ գրասենյակի քարտուղարուհին՝ բարի, գործույա, ժպտաղեմ, շենշող հայ օրիորդ մը, ինձի հանձնեց վերանորոգված բաղմաթիվ վանքերու պատկերները: Իրմէ խմացա, որ քանի մը ուրիշ հայ հնագետներու հետ շուտով պիտի մեկնի Գառնի՝ լու-

* Շարունակված ամսագրի 1954 թվականի մարտի համարից:

սանկարելու համար այս շաբաթ գտնված սենյակի մը մոզակի՝ հունարեն տառերով։ Սիրոս անհուն հպարտությամբ լեցվեցնում տեսնելով Քնարիկի նման պատվական հայուհիներ՝ նվիրված հայ մշակույթի ծառայության։

Կեսօրն ետք քեսարցի քանի մը ընտանիքներու այցելեցի։ Ինձի նամակներ և նվերներ հանձնեցին՝ Քեսար գտնվող իրենց ազգականներուն և բարեկամներուն տալու։ Ամենքն ալ կարողութուն իրենց պարագաներուն։ Իրենցմէ հրաժեշտ առնելու առիթով՝ քեսարցիներու հատուկ լավ պար մըն ալ պարեցին։

Արտակարգ եռուդեռ կտիրն այսօր Երևանի մեջ։ Ամբողջ քաղաքը դրոշազարդված է։ Ժողովուրդը խոնված է շուկաներուն մեջ գնումներ ընելու համար։ Ամեն ոք ուրախության մեջ է։ Հոկտեմբերյան հեղափոխության նախատունն է։ Երեկոյան Ֆիլհարմոնիայի շենքին մեջ մասնավոր հանդիսություն կա. մենք ևս հրավիրված ենք։ Գացինք. մասնավոր օթյակ մը հատկացված է մեզի. մեր քով են բարձրաստիճան հայ և ռուս զորավարներ։ Տեղս կգրավեմ Մարտիրոսյան և Սաֆարյան զորավարներու միջև, որոնց հետ կծանոթանամ և շուտով կմտնեմ մանամ։ Երկուքին ևս կուրծքերը դարձրված են քաջագործությանց շքանշաններով։ Մարտիրոսյան վառվռուն, շենվող անձնավորություն մըն է և հմայող խոսակից մը. խակ Սաֆարյան՝ սակավախոս, հեղ և հանդարտ անձնավորություն մը։ Բեմին վրա պետական մեծ անձնավորություններ բազմած են, ընդ որս հիմնարկներու ներկայացուցիչներ։ Կենտկոմի քարտուղարը ճառ մը կարդաց... Այս ճառով կիսակվեք հայտագիրի առաջին բաժինը. երկրորդ բաժինը երկու մասն կբաղկանար. ա) կարևոր երաժշտական հիմնարկներու կողմն երգ և նվագ, բ) երգի և պարի անսամբլ։ Դադարներուն երկու զորավարներուն և ա՛յլ անձերու հետ հետաքրքրական խոսակցություն ունեցանք Մայր Հայրենիքի և արտասահմանի հայության վերաբերությամբ։ Հանդեսը երբ լրացավ, զորավար Մարտիրոսյան ձեռքս սեղմեց և ժպիտով մը ըսավ.

— Բարի ճանապարհ ձեզ, սրբազան, հաղորդեցի՞ք մեր սրտագին ողջույնները, սիրո համբույրները և հարգանաց հավաստիքը արտասահմանի մեր եղբայրներին և քույրերին։

— Սիրով, — պատասխանեցի։
Ու հարեց.

— Աստված օգնական։

— Ներողություն, — հարեցի, — համայնավար երկրի մը մեջ զորավար մըն եք. ինչպե՞ս հայ եկեղեցական մը բարեկամ ուղիղ ձևը գիտեք։

— Ս. Էջմիածնի Գեորգյան ճեմարանում ունել եմ և սիրում եմ Հայ Եկեղեցին և հայ եկեղեցականին, — եղավ պատասխանը։

Հոգեկան անհուն ուրախությամբ վերադարձա Ս. Էջմիածին։ Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճին մեջ հավաքված հայ ժողովուրդը իր զորավարներով, կառավարական և ժողովուրդի ամեն դասակարգի ներկայացուցիչներով ազգային հպարտությամբ լեցուց զիս։

7 Նոյեմբերի, շաբաթ. — Անջնջելի և անմոռանալի հիշատակներով զեղուն օր մը։ Ամբողջ Երևանը իր շրջակա գյուղերով եռուզեռի մեջ է. հազարավոր մարդիկ թափված են կենդանի հրապարակը։ Իրեն արտասահմանն հյուր եկած եպիսկոպոս՝ հրապարակին վրա պատվո տեղ մը հատկացուցին ինձի։ Տոնախմբությունները սկսան առավոտյան ժամը ճիշտ 10-ին. հիացա իրենց ճշտապահության վրա։ Զորավար. Մարտիրոսյան քանի մը տասնյակ հայ ջոկատները առանձինն բարեկց հանուն հայ ժողովուրդի և Հոկտեմբերյան հեղափոխության։ Բարձրախոսով քանի մը վայրկյան օրվան տոնին նշանակությունը բացատրվեցավ. ապա հազարավոր մարդեր միարեան գոչեցին — Ուռա, ուռա։ Սկսավ զինվորական տողանցքը. ցամաքային և օդային զինվորների խումբ առ խումբ հառաջացան. զինարարներ և թնդամեծներ՝ անոնց նստեհն։ Զորավար Մարտիրոսյան իր շուրջ առած երկու սպաներ մբարեկ զորանցքը, որ կուեն մեկ ժամ։ Ուրեմն մենք ալ, հալածված, անիրավված, մարտիրոսացած հայության զավակներս, զորք, հրացան, թնդանոթ, սպաներ, զորավարներ ունի՞ք եղբր։ Կրնանք հետևաբար պաշտպանել մեր Մայր Հայրենիքը, պահանջել մեր իրավունքները։ Կշարունակվի շքերթը. բոլոր հիմնարկները, գործարանները, հաստատությունները, դպրոցները, համալսարանի զանազան բաժանմունքները, արհեստի և արվեստի բոլոր ճյուղերը, Ակադեմիան, մեկ խոսքով Հայաստանի մեջ ինչ կազմակերպություն որ զոյվություն ունի, մեծ կամ փոքր, այսօր թափոր կազմած կհառաջանան։ Խումբերեն ոմանք պարելով վանքնին, ոմանք՝ երգելով, ոմանք՝ նվագելով։ Ամենն էտք տեղի ունեցավ մարդիկներու տողանցքը. 7.500 հայ երիտասարդ աղջիկներ և տղաներ, մարզական զանազան գույնի զգեստներով, վեհ և առույգ, ազգային հպարտությամբ առջևում տողանցք կատարեցին։ Հանդիսությունները

տեկեցին շորս ժամ, Հայոց աշխարհի կապույտ երկինքին ներքե, համբերական Արարատի դիմաց, մայրենի հողին վրա, հայ ժողովուրդի զավակներուն կողմե, հայտնի համար: Կյանքին մեջ առաջին անգամ այսպիսի տեսարանի մը հանդիսատես կը լլայի: Ես, որ իմ Հայրենիքիս և ժողովուրդիս հանդես սերս պաշտամունքի հասցուցեր եմ, ինչպես գրիչով նկարագրեմ կրած խոր ուրախությունս. ուրախություն, որ մեզի կուտա կյանք, կյանք անվախճան:

Հանդիսություններն ետք ժողովուրդը խոնվեցավ մեր շուրջ. «Արտասահմանից հայ եպիսկոպոս է եկել». արդյոք իրենց ուրախությունը թե զարմանքը հայտնելու համար էր այդ խոնավը:

Ճաշեցի Կրոնական գործերու նախագահ պարոն Հրաչյա Գրիգորյանի տունը: Հայաստանյայց Նկեղեցիին ջերմորեն սիրող, զրազետ, ազնվական վարվեցողության տիպար հայ մըն է պարոն Հրաչյա Գրիգորյան: Մեր խոսակցության ընթացքին իրմե անմոռանալի պիտի մնան սա խոսքերը. «Մեր սըրտագին փափագն է, որ կազմակերպվի Հայաստանյայց Նկեղեցիին իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնով: Մենք պատրաստ ենք մեր օժանդակությունը բերելու. պետք է հայ եկեղեցականները լրջորեն մտածեն, մասնավոր արտասահմանի մեր հայ եկեղեցականները, և ջերմորեն նվիրվեն Հայաստանյայց Նկեղեցու վերանորոգման գործին: Մենք խորապես հավատում ենք, որ Հայոց Նկեղեցիին մեր ազգային կյանքում մեծ դեր ունի կատարելու»:

Երևան լույսերու մեջ է. մեծ հրապարակին վրա ցայտադրվող շատազունած է. անոր շուրջ՝ երգ, նվագ և պար. ամեն կողմ՝ լուսավառություն. ժողովուրդը իր ցնծատունը կապրի:

8-9 հոյեմբերի, կիրակի—երկուշաբթի.— Սուլյն երկու օրերուն հաճախ Ս. Էջմիածին մնացի. Նորին Վեհափառության հետ բազմաթիվ կենսական խնդիրներու մասին նորին խորհրդակցեցանք— Ս. Էջմիածնի վերանորոգության հարցը և անոր կարգադրությունը պարոն Գալուստ Կյուլպենկյանի հետ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության խնդիր, Քենտրեբերի արքեպիսկոպոսին հետ աեսակցություն երկու եկեղեցիներու ավելի մոտիկ հարաբերության և գործակցության համար, էվրոատոնի Նկեղեցական համաժողովին Հայաստանյայց Նկեղեցվո մասնակցության խնդիր, Երուսաղեմի և Անթիլիասի միաբանություններն 2—3 վարդապետներու Ս. Էջմիածին գալու և կրթական, վարչական ու քարոզչական գործերով զբաղելու հարց, քանի մը հայ պատմական ազգային-

ներու— Անգլիայեն՝ պարոն Երվանդ Հյուսիսյանի, Եգիպտոսեն՝ պարոն Հրանտ Նասիպյանի, Լիբանանեն՝ ղոկոտ. Երվանդ Ճիսեճյանի— Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի արժանյաց շքանշան հանձնելու հարց: Իսկ զարով ինձի հանձնվելիք մասնավոր պաշտոնին, Նորին Սրբության դրավոր ներկայացուցի թելադրանքներս:

Երկուշաբթի դիշեր աստվածաբանության վերջին դասը տվի ուսանողներուն: Վստահ եմ, որ դասախոսություններն իրենց օգտակարությունը ունեցան. ջանացի սորվեցնել իրենց հոգեպաշտության անհուն արժեքը և անոր կարևորությունը մարդկային կյանքին մեջ: Անոնցմե շատերը ջերմորեն սիրեցի և հույս ունիմ, որ ապագային հավատավոր, տեսիլք ունեցող ու գիտությանը ճոխացած եկեղեցականներ հանդիսանան: Այս դիշեր դասեն ետք սրտեռանդն աղոթեցի, որ ամենքն ալ լեցվին Ս. Հոգիով, որպեսզի ճշմարտորեն ծառայեն Հայաստանյայց Ս. Նկեղեցվո և ազգին:

Գացի տեսնելու «Փանդոթ» բալետը, որ նոր խմբագրությամբ և սարքավորմամբ առաջին անգամ է որ կրեմադրվի: Մեծ դահլիճը կհորդեր հանդիսականներով: Բեմադրությունը և խաղարկությունը հրաշալի էին: Այդ արվեստը ամերիկայում կամ եվրոպական սրե է թատրոնի մեջ ամենաբարձր գնահատանքի կրնա արժանանալ:

10 հոյեմբերի, երեքշաբթի.— Հետևյալ գրությունը հանձնեցի պարոն Ա. Արաբաճաճյանի, որ պարոն Սամունչյանի միջոցով արձանագրել տա Շահն սրբազանի գերեզմանին վրա. «Այս է տապան հանգստեան Տ. Շահն արքեպիսկոպոս Գասպարեանի՝ աղորանիկ վերադասին Կիլիկիո Դպրեվանդոս ր յԱնթիլիաս: (1882—1935)»:

Գրեթե ամբողջ օրը բարեկամներու, ծանոթներու և հայրենակիցներու այցելեցի և հրաժեշտ առի առնեցմե. շատերուն աչքերը հուզումեն տամիկացան:

Երեկոյան ժամը 7.30-ին ի պատիվ ինձի թեյասեղան տրվեցավ Գրողներու միության կողմե: Մեծ թիվով մտավորականներ և դրողներ ներկա էին, գլխավորությամբ մեծ վարպետին՝ Ավետիք Իսահակյանի: Խոսեցա իմ կրած տպավորությանց մասին. հայտնեցի ուրախությունս Հայաստանի կրթական, արդյունաբերական, գիտական, շինարարական և գեղարվեստական նվաճումներուն մասին ու մաղթեցի, որ նույնը տեղի ունենա նաև կրոնական կյանքի մեջ: Մաղթեցի նաև, որ այլ անգամ, երբ գանք, Մասիսը միայն մեկ կողմեն շտեմենք, այլ բոլոր կողմերեն: Ա. Իսահակյան, Ա. Արաբաճաճյան, Լ. Մանասերյան, Պ. Սելյան և

ալլք արտասանեցին լաժակաճառեր Գեորգ Վեհի արեւշատության, Մայր Աթոռի պայծառության և անսասանության, Հայաստանյայց Ս. Եկեղեցւոյ բոլոր Աթոռներուն միասնականության և սերտ գործակցության, հայ ժողովուրդի և Մայր Հայրենիքի հառաջդիմության ու անսասանության, ամբողջ հայության եղբայրական սիրտ ու միության և հայ մշակութի հավերժացման համար. մաղթեցին նաև, որ մեր բոլոր դպրեմանքներուն մեջ հավատարմոր, հայրենասեր, գիտուն և նվիրված եկեղեցականներ պատրաստվին:

Գիշերվան ժամը 10-ին գացի Ս. Էջմիածին. Վեհափառ Հայրապետը կապասեր ինձի, հանձնեց ինձի հետո տանելիք նամակներն ու կոնդակները. մինչև կես գիշեր անցիր քով մնացի. ծուներ եկա Իր առջև. խնդրեցի, որ օրհնե զիս Իր շնորհաբաշխ Ազով: Նորին Սրբափայլունը հուզված արտասանեց «Պահպանիչ»-ն ու «Հայր մեր»-ը. հոգով զորացա, արիացա. համբուրեց ճակատս ու ես՝ Իր Աջը: Երկար կյանք, շող, խինդ ու ժպիտ հանուրց Հայոց Սրբազնադուին Հայրապետին:

11 Ռոյեմբերի, չորեքշաբթի.— Կրացվի Հայոց աշխարհի արշալույսը: Ամբողջ գիշերը չեմ քնացեր. աղոթեր ու խոկացեր եմ: Մի՞թե կրնայի առանց աղոթքի անցնել իմ վերջին գիշերս հավերժական Ս. Էջմիածնի դմբեթին ներքև: Կյանքը աղոթք է ու աղոթքը՝ կյանք: Կյանք գիշերապահին՝ Արշակին ոտնաձայնը, սանդուղքներին վեր կբարձրանա զիս արթնցնելու. խեղճը չէր գիտեր, որ ամբողջ գիշերը արթուն հսկեր էի:

Ահա սենյակս կ'ստնեն վանքին սպասավորներն ու սարկավազները, կ'զետեղեն պալատականներս ինքնաշարժին մեջ. վերջին անգամ կ'համբուրեմ Ս. Էջմիածնի հաղարամյա սրբացած քարերը. հուզումես կարոտավիմ. կաղոթեմ այս սարկավազ սղոց համար, որ լեցվին Ս. Հոգիով ու նվիրվին Հայաստանյայց Ս. Եկեղեցւոյ և ազգին ծառայության:

Դուրս կելլենք Ս. Էջմիածնի պարիսպն. կթեքինք դեպի Գայանե:

Ահա հոգևոր ծնողիս՝ լուսահոգի Ծահն սրբազանի գերեզմանը. ջերմեռանդ «Հոգւոց»-ն մը ետք՝ համբուր դինք ամփոփող հողին: Ո՛րքան սիրեր եմ զինք, սիրո և բարության այդ մեռնաբույր հոգին: Ու երանի՜ թե օր մըն ալ ես իմ հունավոր ու սահմանավոր էութանս մասը հոս, իր կողքին հանդեպնեմ...:

Կ'ստնեմ ինքնաշարժ. Լեոն արագորեն կ'ջն. դուք ուշանանք: Մեր աջին Արարատն է, որ իր ճերմակ դեմքը ծածկեր է ինձմե. ձախին՝ Արաբածը, որուն ձյունածածով

գազաթին վրա ոսկի շողեր կ'թափին: Ժամը 8-ին կ'հասնինք Երևանի օդանավակայանը: Հ. Գրիգորյան, Մ. Մինասյան, Պ. Սելյան, Ա. Աբրահամյան և այլք հրաժեշտի եկած են: Ամենքն ալ կ'սնդրեն ինձմե, որ իրենց ողջույններն ու սերը տանիմ արտասահմանի բոլոր հայերուն: Ինքնաթիռը կ'բարձրանա Հայոց աշխարհի երկինքին մեջ. վարը՝ ամպերու ծով, վերը՝ կապույտ անբավություն, որուն մեջ խորխորապատ գույգ Մասիսներուն սպիտակափառ գագաթները կոթողացած են: Հոգեկան անճառելի հրճվանքով կ'դիտեմ զանոնք: Մոտ երկու ամիս, օրվան զանազան պահերուն, ես Արարատը դիտեցի. ամեն անգամ, որ անոր նայեի, տարբեր կերպարանքով կ'ներկայանար ան՝ մի՛շտ սիրուն, գեղեցիկ և ափնքնող: Վերջին անգամ մըն ալ նայեցա անոր՝ հայոց ստոր լեռան: Անբեկաթացավ, անոր հետ՝ հայկական լեռնաշղթան: Ալ Հայաստանի վերև չենք, բայց մեր նախնիքներու հոգին մեզի հետ է:

Մեր ճամբուն վրա կ'հանդիպինք Սուխումի, Ռուստով և Խարկով: Գիշերվան ժամը 10.30-ին կ'հասնինք Մոսկվա, ուր դիմավորության եկած են արժանապատիվ Տ. Խաչատուր, բարեշնորհ՝ Անդրանիկ սարկավազ և Կոռնական խորհուրդի ներկայացուցիչը: Իջևանեցանք Նասիոնալ հյուրանոցը: Ամբողջ գիշերը երազեցի... Ութը տարի առաջ տեսած էի Հայաստանը. բայց հիմա որպիսի փոփոխություն. ահա՛ Մայր Երկիրը, ավելի՛ շենքած, ավելի՛ բարգավաճ. հայ ժողովուրդը՝ ավելի՛ ուրախ, ավելի՛ ազատ, ավելի՛ երջանիկ. Ս. Էջմիածինը, հայ եկեղեցիները, ավելի՛ պայծառ, ավելի՛ եռուն: Տե՛ր, հաստատ ու անսասան պահե մեր նախնիքներու արյունով ներկված նվիրական Հայրենիքն ու մեր Մայրենի Ս. Եկեղեցին իր ժողովուրդով:

12 Ռոյեմբերի, հինգշաբթի.— Կեսօրե առաջ անգլիական, գերմանական և բելգիական վիզաները առի, իսկ կեսօրե ետք մինչև ուշ գիշեր նամակագրությամբ զբաղեցա:

13 Ռոյեմբերի, ուրբաթ.— Արժանապատիվ Տ. Խաչատուրի հետ Ռուսաց Ալեքսի Պատրիարքին այցի գացի: Նորին Ամենապատվությունը և իր միտրոպոլիտը շատ սիրալիր ընդունելություն ըրին մեզի: Ալեքսի Պատրիարք խորիմաց, կայտառ և հաճելի անձնավորություն մըն է: Մեր խոսակցության գլխավոր նյութը եղավ Էվրեստոնի համաժողովին իրենց բերելիք մասնակցությունը: Դիտել տվավ, որ թեպետ ուղղափառ դավանության հակառակ է նման մասնակցություն մը, սակայն ինք ջերմ փափազող է եկեղեցիներու համերաշխ գործակցության,

միության և աշխարհի խաղաղության: Իրեն բացատրեցի, որ օրթոդոքս և արևելյան եկեղեցիները էվրեստոնի մեջ մեծ ներկայացուցչություն ունենալով՝ կրնան ժողովին վրա իրենց ազդեցությունը տնեհնալ և իրենց տեսակետները պաշտպանել: Ասկի զատ էվրեստոն միջոց կհանդիսանա, որ օրթոդոքս և արևելյան եկեղեցիներ, գրեթե բոլորն ալ դավանակից, իրարու քով կարենան դալ. առանձին ժողովներ գումարել՝ զիրար մոտեն հասկնալու և գործակցելու համար: Կաթոլիկությունը ունի միացյալ ճակատ, բողոքական զանազան հարանվանություններ կձգտին միության գետին մը ստեղծել. ինչո՞ւ ուրեմն ուղղափառ և արևելյան հին եկեղեցիները ավելի համերաշխորեն չգործակցին և ներքին միություն մը հառաջ չբերեն, միություն, որ կարենա զիրենք պաշտպանել կաթոլիկ և բողոքական մարդորսություններեն: Սրբազան Պատրիարքը համամիտ գտնվեցավ սույն գաղափարներուն և դո՞ւ մնաց մեր այս խորհրդակցութենեն:

Նորին Ամենապատվությունն ու իր միտքով իրար մեզ պատգուցին Պատրիարքարանի դահլիճը և ա՛յլ մասեր. ապա Նորին Ամենապատվությունը խնդրեց, որ Զազորսկի իր դպրեմանքը այցելեմ՝ գաղափար մը կազմելու համար, իրել տեսուչը նույնանման հաստատության մը:

Քարեշնորհ Անդրանիկ սարկավագին հետ մեկնեցա Զազորսկ, որ Մոսկվայեն 100 կիլոմետր հեռավորություն ունի: Անդրանիկ սարկավագ ուշիմ, վառվառ և ճարպիկ երիտասարդ մըն է, Քաջիկ և Հենրիկ սարկավագներուն հետ Մոսկվայի մեջ կշարունակե իր ուսումը: Հայրենակիցս է և կարճ ժամանակվան ընթացքին ռուսերեն սորված է. Զազորսկի Աստվածաբանական Ճեմարանը ուսած է երկու տարի. որով կրցավ իմ թարգմանա հանդիսանալ:

Ճեմարանին վերատեսուչն է ավագերեց Կոստանդին Իվանովիչ Ռոսիցկիյ. իր օգնականն է Նիկոլայ Պետրովիչ Դոկտուաով: Վերջինս Հայաստանյայց Եկեղեցվո մասին հատուկ աշխատություն ունի: Վերատեսուչ և փոխանորդ ամեն տեղ պատգուցին մեզ: Ճեմարանը ունի 205 աշակերտներ՝ ժառանգավորաց և Ընծայարանի բաժիններով: Ուսանողները կպատրաստվին թե՛ ամուսնացյալ և թե՛ կուսակրոն եկեղեցականության, ինչպես նաև ուսողչություն համար: Քանի մը հատ նոր ձեռնադրված երիտասարդ արեւական տեսա, սիրուն, անուշ դեմքով, շատ համակրելի: Տնօրենը ըսավ, որ աշակերտները ընդհանրապես հավատացյալներու զա-

վականն են: Այցելեցի բոլոր դասարանները. ուսանողները հոտնկայս և ծափահարություն բերեցան մեզ և երգեցին. «Նսրուլու էտիտե տեսիլուտա» (==իշխանավորին՝ սրբազանին երկար կյանք): Եղանակը շատ անուշ է և հաճելի: Ուսանողներ կսերտին ընդ հակողությամբ արեւականերու:

Զազորսկի մենաստանը հիմնված է ԺԴ դարուն հանուն Ս. Սարգիսի: Ճեմարանի ներկա շենքը կառուցանել տված է Մեծն Պետրոս իր աղջկան համար: Միայն տասնյակ մը տարիներ առաջ Գյրեմվանքի վերածված է: Ընթերցի՞նք տեսուչին և իր փոխանորդին հետ. ուշ ատեն վերադարձանք Մոսկվա:

14 ճույնմբերի, շաբաթ.— Առավոտյան ժամը 10-ին ինքնաթիռով մեկնեցա Նոր-Նախիջևան: Նախ հանդիպեցանք Վրոտնեժ և ապա Ռոստով: Ծանապարհը տեղեց վեց ժամ: Ռոստովի օդանավակայանը դիմավորության եկած էին երկու քահանա հայեր՝ արժանապատիվ Տ. Գեորգ և արժանապատիվ Տ. Հուկոր, Կրոնական խորհուրդի բոլոր անդամները և Կրոնական գործերու խորհուրդի նախագահը, որ ուսա մըն էր:

Հյուրասիրվեցա հայու մը տուն. պայուսակներս զետեղելին հոք անմիջապես պտտելու գացի Դոն գետի ափին: Ժամ մը հոք հասա Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր մուտք գործեցի զանգակահարությամբ և «Հրաշափառ»ով: Ներդաշնակ ժամերգություն պաշտվեցավ. երբ ավարտեցավ ժամերգությունը, ժողովուրդը աջահամբույրի եկավ. նոր-Նախիջևանցիք շատ հավատացյալ են:

Նոր-Նախիջևանի մեջ այժմ երկու եկեղեցի կա՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Հովհաննու Կարապետ: Նոր-Նախիջևան ունի հինգ գյուղեր, Զալալը, Թոփուի, Մեծ Սալա, Փոքր Սալա և Նիսվիթա: Ասոնցմե Զալալը, Թոփուի և Մեծ Սալա քահանա ունին:

Նոր-Նախիջևանցիք ունին իրենց հատուկ բարքառը, որ դժվարահասկանալի է. կարծեք հայերենի, ռուսերենի, թյուրքերենի, թաթարերենի խառնուրդ մըն է:

Կրոնական խորհուրդի անդամներեն իմացա, թե տարիներ առաջ երբ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց իրենց առաջնորդն էր, ամեն կիրակի երեկո, ժամերգությունեն հոք, «Եկեսցէ»ի արարողություն կկատարվի եղեր ու «Գարեգին սրբազանը քարոզում էր և հավարավոր հավատացյալներ գալիս էին նրա հոգեշունչ քարոզները ունկնդրելու»: Շատ

գեղեցիկ սովորություն մըն է ասիկա. ջանալու է, որ ընդհանրապես մեր թեմերուն մեջ չկայ:

15 նոյեմբերի, կիրակի.— Քարոզեցի և պատարագեցի Նոր-Նախիջևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ մեջ: Դպրաց դասը մեծամասնութիւնով իրական սեռեն՝ շատ ներդաշնակ երգեց. իրենց անուշ երգեցողութիւնը զիս շատ հուզեց: Քարոզի բնաբանս օրվան գիրքեն առի. «Ունիմք գիրկուքիւն ի ձեռն Արեան նորա» (Յփես., Ա 10): Հավարտ Ս. պատարագի՝ ժողովուրդը աջահամբույր եկավ. իրենց համար արտասահմանն եպիսկոպոս տեսնել անսովոր և արտակարգ բան մըն էր: Կրօնին, թե Համաշխարհային առաջին պատերազմին ի վեր արտասահմանն իրենց բարձրաստիճան եկեղեցական չէ այցելած: Հավատացյալներու ցնծագին մաղթանքներու տարափին սակ մեկնեցանք:

Չնաշեցի. ժամանակ չկար. պետք էր, որ հայ գյուղերը այցելէի: Հոգևոր խորհուրդի անդամներում հետ գացի Ս. Հովհաննու Կարապետի եկեղեցին. հայկական ռոմով գողտրիկ, սիրուն տաճար մըն է՝ կառուցված 1883-ին: Ապա մեկնեցա Ս. Խաչ, որ յոթը կիլոմետր հեռավորութիւն ունի Նոր-Նախիջևանէն: Նախկին շէն և գեղեցիկ վանք հիմա ամառի է և կիսավեր վիճակ մը ունի՝ Համաշխարհային երկրորդ պատերազմի ատեն գերման խժոժութեանց հետեւանքով:

Վանքին բոլորտիքը գերեզմանոց եղած է. դեռ կանգուն են քանի մը դերեզմաններ. անոնցմէ երեքը զիս խորապես կ'հուզեն— Գամառ Քաթիպայի, Միքայել Նալբանդյանի և Նահապետ եպիսկոպոս Նահապետյանի: Վերջնույս գերեզմանաբարը գետին ինկած էր. մեր շարժավարը Մանվել, քաջ և հանքուքն երիտասարդ մը, քանի մը ռուսերու օգնութեամբ, բավական հոգնութենէ ետք զայն իր տեղը հաստատեց: Նալբանդյանի արձանը կանգնած է վեցանկյուն կլոր սյունի մը վրա, իսկ սյունը՝ պատվանդանի մը վրա. ամենքն ալ համակ ընտիր մարմարէ կառուցված: Գ. Քաթիպայի անդրին մարմարի խոշոր բարձրագիւր պատվանդանի մը վրա կկանգնի: Կիւմանամ, թե կառավարութիւնը մասնավոր կարգադրութեամբ Նալբանդյանի և Քաթիպայի մասունքներն ու արձանները իրենց պատվանդաններով Նոր-Նախիջևան պիտի փոխադրեն. կթելադրեմ, որ Նահապետ եպիսկոպոսին ալ փոխադրեն:

«Ազատն Աստված այն օրից» և «Մայր Արաքսի ափերով» երգերը մեր շրթներուն կրթնվինք անոնցմէ:

Տասը կիլոմետր հեռու Մեծ Սալա հայ գյուղն է, ուր շուտով կհասնինք: Մեծ Սալա

Հուսիկ արքեպիսկոպոսի ծննդավայրն է. ի գուր կորոնեմ իր տունը «Հոգւոց» մը ըսելու համար: Կերթանք Ս. Աստվածածին եկեղեցի. քահանան՝ արժանապատիվ Ս. Արտաշես Մանուկյան կդիմավորե մեզ. կարճ արարողութիւն մը կընենք. հավատացյալներ երկյուղածութեամբ աջս կհամբուրեն: Մեծ Սալային կանցնինք Թոփուի. քահանան մեկներ է Չալտըր. կփութանք հոն: Զանգակահարութեամբ և «Հրաշափառ»ով կմտնենք եկեղեցի, ուր խոնկած են հավատացյալներ. կպաշտփ երեկոյան ժամերգութիւն, որ երբ կավարտի, կքարոզեմ բնաբան ունենալով՝ «Որ համբերեսցէ խապառ, եւ կեցցէ»: Չալտըրի եկեղեցիին անունն է Ս. Համբարձում, կառուցված՝ 1871-ին: Գյուղը ունի տասնամյա դպրոց. կպարունակէ 1.200 ընտանիք: Արժանապատիվ Ս. Սարգիսի տունը ճաշի հրավիրվեցանք. ներկա էին արժանապատիվ Ս. Հակոբ քահանան և թաղականութեան անդամները:

Գիշերով վերադարձանք Նոր-Նախիջևան:

16 նոյեմբերի, երկուշաբթի.— Երեկ օդը շատ հաճելի էր և գեղեցիկ. կես գիշերին ետք՝ սոսկալի ձյունամրրիկ: Օդանալը, փոխանակ առավոտյան ժամը 9.40-ին ճամբա ելլելու, կեսօրի ետք հաղիվ 2.40-ին կրցավ թիւ: Արժանապատիվ Ս. Գեորգի, արժանապատիվ Ս. Հակոբի և Կրօնական խորհուրդի անդամներուն հետ հինգ ժամ օդակայան սպասեցինք:

Այս վատ եղանակին Ռոստովէն Մոսկվա թռիչքը վտանգավոր էր և տաժանելի: Բայց ապահով հասանք ռուս քաջ և հանդուգն սովետորդներու միջոցով:

17—18 նոյեմբերի, երեքշաբթի—չորեքշաբթի.— Կպատրաստվինք մեկնիլ Բեռլինի վրայով: Պարոն Հրաչյա Գրիգորյան Երևանէն եկավ իր ռուսներն լեզվով գրած մեկ նոր գիրքին հրատարակութեան առիթով: Ուրախ եղանք նորեն իր ընկերակցութիւնը վայելելու՝ Ճաշի հրավիրեցի Մոսկվայի համալսարանի մեջ ուսանող սարկավագները՝ Քաջիկ, Հենրիկ և Անդրանիկ. մինչև կես գիշեր խոսեցանք ազգային, կրօնական և պատվածաբանական խնդիրներու շուրջ: Թելադրեցի իրենց, որ հավատարիմ մնան իրենց կոչումին վրա, խորանան հավատքի ու գիտութեան մեջ և անշահախնդրորեն նվիրվին Ս. Էջմիածնի և Հայաստանյայց եկեղեցւոյ ծառայութեան:

Սույն երկու օրերուն գրեցի հոգված մը և նամակներ. իսկ քանի մը ժամ ալ սարկավագներուն հետ քաղաքին հետաքրքրական տեղերը պատեցա: Հեռագրեցի եղբորս Դիտ-

րոհաւ, որ ինձ 350 դուրս դրկե Անգլիա, որպէսզի կարենամ ճամբորդութիւնս շարունակել:

19 նոյեմբերի, հինգշաբթի.— Առավոտյան ժամը 9.30-ին օդանավով Մոսկվային մեկնեցաւ Բեռլին: Կրօնական գործերու նախագահը՝ պարոն Հրաչյա Գրիգորյան, ճշմարտապես ազնիվ ու պատվական հայ մը, օդակայան եկած էր զիս ճամբելու: Ցավ հայտնեցի, որ այսքան նեղութիւն քաշեր էր ինձի համար: «Ոչինչ, սիրով և հաճութով», — պատասխանեց: Բարեշնորհ Անդրանիկ սարկավազ ալ եկած էր, տամկացած աչքերով, հորը կարոտը սրտին: 15 ճամբորդներ էինք. որեւէ մեկուն պայտասակները չբնակեցին: Մեր ճամբու ընթացքին հանդիպեցանք Մինսկ և Վարշավա: Կեսօրե ևս ժամը 3.30-ին հասանք Բեռլին: Թանձր, համատարած մշուշին պատճառով մեր ճամբու ընթացքին բան չտեսանք: Առանց որեւէ նեղութեան՝ արեւելյան գոտիին անցանք արեւմտյան կողմը:

20 նոյեմբերի, ուրբաթ.— Օդին աննպաստ հանգամանքին և թանձր համատարած մառախուղին պատճառով օդանավային գրեթէ բոլոր ճանապարհները փակված են: Ստիպվեցանք մնալ Բեռլին: Մեր ժամանակը օդադործելու համար «տակսի» մը առինք և ամբողջ քաղաքը պատեցանք: Անցագիր ունեցողներու համար որեւէ դժվարութիւն չկա քաղաքին արեւելյան կամ արեւմտյան մասերը պտտելու: Բեռլինի կարևոր մասը ավերակներու մեջ է, արդունք՝ հիւրերական ամբողջատիրական քաղաքականութիւն: Գիշերը՝ նամակագրութեամբ դադարեցաւ:

21 նոյեմբերի, շաբաթ.— Բրյուսել ճանապարհը Ֆրանկֆորտի վրայով գոցված է: Կմեկնինք Համբուրգ. անկե Ամստերդամ և ապա՝ Բրյուսել: Պարոն Վարդան Մուրտիկյան թաղական խորհուրդի հետ մեկ կգիմալորե օդանավակայանի մեջ: Ուշ գիշերին միայն կարելի կըլլա հանգստանալ. անհրաժեշտ էր Հայրենիքի խաբրիկները հաղորդել հայրենասեր հայորդիներուն:

22—24 նոյեմբերի, կիրակի—երեքշաբթի.— Մնացի Բրյուսել Հայաստանի մեջ շարժանկարած ֆիլմերս «développeur» ընել տալու համար: Հաղիվ երեքշաբթի երեկոյին կրցան հանձնել ինձի: Կիրակի պատարագեցի Բրյուսելի Անգլիքան Եկեղեցւո մեջ և քարոզեցի սա բնարանով. «Տէ՛ր, առ ո՛վ երթիցում, բանս կեանց յալիտեմականաց ունիս» (Հովհ., 2 69): Երկուշաբթի կեսօրե առաջ զվիցերիական և իտալական վիզաներ

առի: Օրվան մնացյալ մասը և հաջորդ երեքշաբթի հայ բնտանիքներու այցելեցի. խրախուսեցի ամենքն ալ, որ ապրին իբրեւ ճշմարիտ հայեր, շմոռնալով իրենց լեզուն ու կրօնը:

25 նոյեմբերի, չորեքշաբթի.— Օդանավով մեկնեցաւ Լոնդոն և իջեանեցաւ հայոց եկեղեցին՝ հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի քով: Երկուրուկես ամիսն ի վեր ազգային կյանքի գրեթէ որեւէ լուր չունեի. հայր Պսակ և տիկին Սեզա հաղորդեցին ինձի լուրեր, որոնց մեջ ըստ իրենց հետաքրքրական էր եպիսկոպոսներու Կոստանդնուպոլիս ճամբորդութիւնը: Վեհափառին ինձի տված նամակներն մաս մը հանձնեցի իրենց տներուն:

26 նոյեմբերի, հինգշաբթի.— Mowbray հրատարակչական ընկերութեան գացի. համաձայնեցանք Օրմանյան սրբազանի «Հայոց Եկեղեցի» գիրքի անգլերեն թարգմանութեան վերահրատարակման համար: Սույն գիրքին մեջ ավելցուցինք գլուխ մը, որ կներկայացնէ Հայաստանյայց Եկեղեցւո ի. դարու պատմութիւնը, ինչպես նաև Գ. հաճելիված մը: Այցելեցի մեր Դպրեվանքի նվիրատուններուն՝ պարոն Հակոբյանին և Կյուպենեկյանին: Վերջնույս հետ մեր տեսակցութիւնը շատ սիրալիւր եղավ և ի նպաստ հայ մշակույթի:

27 նոյեմբերի, ուրբաթ.— Հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի և Անգլիքան Եկեղեցւո դիվանապետին հետ Քենտրբերիի Արքեպիսկոպոսին այցելեցի: Նորին Սրբազնութիւնը հանգստանալու համար քաշվեր էր հեռավոր դուռ մը, որ Լոնդոնէն մեկ ժամ հեռու է վարաշարժով: Մեր տեսակցութիւնը եղավ հուլիս մտերմական և սիրալիւր: Հաղորդեցի իրեն Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Հայրապետի եղբայրական ողջունները և ապա հանձնեցի Վեհափառ Հայրապետի տված նվերը՝ «Հին հայկական մանրանկարչութիւն» գիրքը, որմն շափաղանց գոհ մնաց: Տվի իրեն նաև Վեհին ինձի հանձնած նամակները և խոսեցաւ այն խնդիրներու մասին, որոնք Գեորգ Կաթողիկոսեն հանձնարարված էին ինձի: Քենտրբերիի Արքեպիսկոպոսը մեր այցեն և Վեհափառի կողմն ներկայացված հարցերին շափաղանց գոհ մնաց: Հյուրասիրութենէն հետք վերադարձանք Լոնդոն:

Ս. Էջմիածնի ճեմարանի ուսանողներուն զգեստ զրկելու հարցը հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի կողմն կարդադրվեցավ: Պետութիւնը պետք եղած դուրսութիւնը պիտի ընծայի փոխադրութեան համար:

28 նոյեմբերի, շաբաթ.— Օդի ճամբուով մեկնեցա ժընեկ. ծանոթներ ու բարեկամներ օդակայան դիմավորության եկած էին։ Իջե-վանեցա Դպրեվանքի բարերար պարոն Տրդատ Թյուլսյուլյանի տունը։ Այս անգամ զինք ավելի առողջ և կազդուրված գտա, մանավանդ Հայաստանի կոնյակը խմելն ևտք։ Այցելեցի քանի մը բարեկամներու. երկու հոգի հիվանդ էին։ Ավետարան և «Փարատեա» կարդացի անոնց վրա։

29 նոյեմբերի, կիրակի.— Սուրբ պատա-րագ մատուցի. ժընեկի ամբողջ հայությունը ներկա էր։ Քարոզեցի սա բնաբանով. «Ճեկրեկ երթայցէք, քառոզեցէք և առացէք քէ մերձեալ է արհալուրիւն երկնից» (Մատթ., Ժ 7)։ Ծաշեցինք տեր և տիկին Մանուկ Կա-րապետյաններու տունը։ Պարոն Կարապետ-յան հնություններով կը բարդի. Ս. Էջմիածնի ճեմարանին մեջ մեր դասավանդությանց իբրեւ քաջալերական գնահատություն ըրավ հետեւյալ նվերները մեր Դպրեվանքի թան-գարանին. գոտիի ճարմանդ մը արծաթ ոս-կեջրած, մոտ 200 տարւան հնությամբ. մե-տաքսով բանված սրբիչ մը, մետաքսե և արծաթե ձեռագործ քթանի վրա՝ 250 տար-ւան հնությամբ. մակեդոնական և հնդկա-կան շալ, ձեռագիր փոքրիկ արծաթապատ ավետարան մը, չորս դրամներ՝ որոնցմե երկուքը Մեծն Տիգրանին են, ձեռաց փոքրիկ դավադան մը ԺԸ. դարեն, 100 տարւան դուլդ մը ձեռնոց և դուլդ մը գուլպա։

Օրվան մնացյալ մասը այցելությամբ ան-ցուցի։

30 նոյեմբերին մինչև 2 դեկտեմբերի, ե-րկուշաբթի—չորեքշաբթի.— Երկուշաբթի ե-րեկո տիկին Սարգիսյան իր տունը հրավիրեց ժընեկի գաղութին բոլոր երեւելի հայերը. Հայաստանեն իմ բերած ֆիւմերս և նկար-ներս ցուցադրեցի ներկաներուն։ Երեքշաբթի մեկնեցա Բեռն՝ նվիրատվություն մը կար-գադրելու համար ի նպաստ մեր Աթոռին։ Երեկոյին տիկին Արմենուհի Միսիրյանին տունը հյուրասիրվեցաւ։ Սույն եկեղեցասեր, ազնվական և ճշմարտորեն բարի հայ տի-կինը հանձն առավ ցկյանս տարեկան հա-զար դոլար նվիրել մեր Դպրեվանքին։ Չո-րեքշաբթի Համաշխարհային եկեղեցիներու դրասննյակը այցելեցի. տեսնվեցանք առաջ-նորդներուն հետ էվրեստոնի համաժողովի վերաբերյալ հարցերու շուրջ։

3—5 դեկտեմբերի, հինգշաբթի—շաբաթ.— Համատարած թանձր մշուշին պատճա-ռով օդային երթեկը դադրած է։ Կեսօրե ետք ժամը 3-ի գնացքով մեկնեցա Միլան։ Զվիցերիո ձյունապատ լեռները իրկնամու-տի մշուշին մեջ գեղեցիկ տեսարան մը կպարզեին։ Ժամը 9.30-ին հասանք Միլա-

նո։ Կայարան դիմավորության եկած էին հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ, թաղականության անդամները, պարոն Եր-վանդ Հյուսիսյան, դոկտ. Արզումանյան և զաղութին այլ ազգայինները։ Առաջնորդվե-ցանք պանդոկ, ուր մինչև ուշ առտն մնա-ցինք մեր հյուրերուն հետ։

Ուրբաթ առավոտ պարոն Երվանդ Հյու-սիսյան այցի եկավ. մեր խոսակցության նյութը դարձավ Ս. Էջմիածնի և Անթիլիասի դպրեվանքներուն նյութական ապահովության հարցը։ Կեսօրե ետք այցելեցի տիկին Զվարթ Սեֆերյանի և ա՛յլ ազգայիններու։

Շաբաթ օրը պարոն Հովհաննեսյանի հետ Քոմս մեկնեցա՝ պարոն Անիկ Մանուկյա-նը տեսնելու. իր տիկնոջ հետ գերեզմանոց դացինք և իրենց ծնողաց ու ազգականին համար հոգեհանգստյան՝ պաշտոն կատարե-ցինք։ Շատ գոհ մնացին։ Միծապես հուզ-վեցա, երբ նկատեցի, որ տերունական աղոթքը արտասանած միջոցիս տիկին Մա-նուկյան, որ իտալացի է, և իր զավակները այնքան ուղիղ և հստակ ինձի հետ անսխալ կարտասանեին «Հայր մեր»ը։

Երեկոյին վերակազմեցի Միլանոյի Անթի-լիասի օգնության հանձնախումբը։

6 դեկտեմբերի, կիրակի.— Պատարագեցի Միլանոյի Անգլիքան եկեղեցւո մեջ, որ աննախընթաց բազմությամբ մը լեցված էր։ «Հայր մեր»ն առաջ նորին Ս. Օծովյուն Տ. Տ. Գեորգ Վեհափառին կոնդակը «Հրա-շափառ»ով վերաբերվեցավ. Հայր Զգոն կար-դաց դալն և հանձնեց պարոն Երվանդ Հյու-սիսյանի. անմիջապես հետո երգվեցավ «Էջ Միածինն է Հօրէ» շարականը։ Քարոզեցի օրվան պիթքեն աննեով բնաբան. «Գոնա-նալ պարտիմք գլխուսմոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբա՛րք, որպէս և արժան իսկ է. զի ևս քան զևս անեն հաւատք ձեր, և յանախէ սէր իւրաքանչիւր ամենեցուն ձեր սո միմեանս» (Բ. Թեաղոնիկեցւոց, Ա 3)։ Սույն կոնդակով, զոր մեղի հետ բերած էինք, Վեհափառ Հայրապետը պարոն Երվանդ Հյուսիսյանին կշնորհեւ «Իրավունք կրելու Ս. Լուսավորչի առաջին կարգի աղամանդյա շքանշան», իր կատարած «բազմատեսակ բարի գործեր»ուն համար։ Միլանոյի, ինչ-պես նաև Բեռլինի, Անգլիո և Զվիցերիո ամբողջ հայությունը սրտեռանդն հրճվեցավ Երվանդ Հյուսիսյանի նման պատվական հայու մը ազգին Հայրապետին կողմն գնա-հատվելուն համար։

Կեսօրե ետք Հայ տան քացման հանդեսը տեղի ունեցավ. ես նախագահեցի. ինձի հետ էին Վենետիկի միաբանության արքա-

1. Կոնդակը հրատարակվել է «Էջմիածին» ամ-սագրի նախորդ համարում։

հայրը՝ գերապայծառ Սրապիտոն Ուլուհոճյանը և հոգեշնորհ՝ Տ. Զգոն ծայրագույն վարդապետը։ Իտալիո հայութիւնը փութացած էր տան բացման հանդեսին։ Խոսեցան դոկտ. Արզումանյան, հայր Զգոն, պարոնայք Ե. Հյուսիսյան, Ալեքսանյան և Արքահայր Ուլուհոճյան։ Փակման խոսքը ես արտասանեցի։ Ներկաներ ամենքն ալ խանդավառված էին Հայ տունով, իրենց տունով։ Հիւրավի Հայ տունը իր ընդարձակ սրահով, մատենադարանով և հարակից բաժիններով պատիվ կրեւի Միլանոյի հայութեան։

Այստեղ հարկ կնկատեմ դեռ պարոն Ե. Հյուսիսյանի ճառը, որ իր պարզութեամբ և ազնվականութեամբ մեծ արժեք ունի և որ կվկայե, թե մեծանուն ազնվական բարեգործը դրամական ճոխութենէ առաջ մեծ է նաև իր հոգիով։

«Գերաշնորհ սրբազան հայր, գերհարգելի՛ արքահայր, հայրք, տիա՛ր ատենապետ և սիրելի՛ հայրենակիցներ.

Այսօր ամենուս համար ուրախութեան օր մըն է, իսկ ես կապրիմ կյանքիս ամենէն երջանիկ օրը, երբ կտեսնեմ ձեզ՝ բոլորդ հավաքված Հայ տան մեջ, ուր կխոսվի լեզու մը, զոր ամենքս ալ կհասկընանք։ Երբ կնշմարեմ ձեր դեմքերուն վրա ուրախութեան ճառագայթումը և ձեր աչքերուն մեջ փայլիլը իր պարտականութիւնը կատարողի մը ինքնագոհունակ զգացումը, սիրտս կզեղու այնպիսի ուրախութեամբ մը, որուն նմանը չեմ ունեցած երբեք։

Պիտի մաղթեի, որ այս Հայ տունը չլլա միայն ազգային և կրօնական համախմբութեան երկու վայր մը, այլ հոս ունենանք նաև մեր հարսանիքները և մկրտութիւնները, վերջապէս նկատենք ասիկա մեր տունը, հայուն տունը առանց դավանանքի և գաղափարի խտրութեան։

Անցյալ շաբաթ իմանալով, որ գերաշնորհ Տ. Գերենիկ սրբազանը Ս. Էջմիածնէն, մեր Հայրենիքէն վերադառնալով Միլանո պիտի գա, հատկապէս Ամենայն Հայոց Սրբազնակատար Կաթողիկոսին՝ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. ի հայրապետական մասնավոր շնորհ ու օրհնութիւնը բերելու մեր գաղութին և ինձի՝ ազգիս և Եկեղեցիիս իմ մատուցած համեստ ծառայութեան համար, շատ զգացված էի և շատերուն փափագովը խնդրեցի, որ գերաշնորհ սրբազանը այնպէս կարգադրե, որ կարելի ըլլա իրեն համար ներկա ըլլալ մեր Հայ տան այսօրվան բացման հանդիսութեան։

Ուրախ եմք ունենալով զինք այսօր մեր մեջ։ Ես մասնավորապէս այս հանդիսավոր առիթն օգտվելով իրեն կհայտնեմ իմ խորին շնորհակալութիւններս և երախտագիտութիւնս իր բարեխոսութեան համար անձիս վերաբերմամբ Վեհափառ Հայրապետի մոտ։ Զեմ գիտեմ, թե ի՞նչ ըրած եմ արժանանալու համար ինձի շնորհած պատիվին, բայց գիտեմ, որ պիտի ընեմ այն, ինչ որ պետք է՝ արժանի ըլլալու համար անոր և մրելու զայն կուրծքիս հպարտորեն։

Կիսրբեմ ուրեմն խոնարհաբար ձեզմէ, սրբազան հայր, որ Վեհափառին մոտ թարգմանը ըլլայիք իմ երախտագիտական զգացմունքներուս. ինձի շնորհված օրհնութեան կոնդակը և Ս. Լուսավորչի պատվանշանը կընդունիմ ակնածութեամբ և զանոնք կպահանջեմ իր սրբութիւն և կողմնացույց կյանքիս մնացած օրերուն համար։

Շնորհակալութիւններ նմանապէս ատենախոսներու կողմէ անձիս հանդեպ եղած արտահայտութիւններուն. ես ալ իմ կողմէ բնական է ունիմ շնորհակալութեան խոսքեր ձեզ ամենուդ համար և ամեն անոնց, որոնք մեզ քաջալերեցին այս ներկա ձեռնարկին համար։ Մենք ունեցանք մեր Հայ տունը, որովհետեւ ամեն ոք միացավ մեզի և կատարեց իր պարտականութիւնը։

Ինձի շնորհված բարձր պատիվը մեծ չափով արդար կգտնեմ փոխանցել Իտալիո մեր գաղութին, որուն մեջ շատերը իրենց ցույց տված թե՛ նշովական և թե՛ բարոյական ծառայութեամբ առարկա են մեր հիացումին և մեր երախտագիտութեան։ Շնորհիվ Աստուծո՛ր քանի կան մեր մեջ այս խանդավառութիւնը, այս համերաշխութիւնը և ազգասիրական սգին, այս գաղութը պիտի մեծնա և բարգաւաճի այս ազատ ու դեղեցիկ երկրին՝ Իտալիո փառապանծ դրոշակին տակ։

7 դեկտեմբերի, երկուշաբթի.— Առավոտյան ժամը 8-ին պարոն Ե. Հյուսիսյան և հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ օղակայան եկան զիս ձամբելու։ Երկու ժամէն հասանք Հոռո՛։ Օդի աննպաստ ըլլալուն պատճառով Նյու-Յորքէն եկող օդանավը յոթ ժամ ուշացավ։ Օգտվելով այս հապաղումէն Հոռո՛ի պատմական վայրերը պատեցա։ Ժամը 9-ին գիշերով մեկնեցա Կահիրե, ուր հասա առավոտյան ժամը 3-ին։ Դպրեվանքի մեր նորընծա քահանաներէն արժանապատիվ Տ. Պետրոս բարեկամի մը հետ դիմաւորութեան եկած էր։ Իջևանեցանք Հելիոպոլիս պալատ պանդոկը։

8—11 լեկտեմբերի, երեքշաբթի—ուրբաթ.— Սույն օրերուն այցելեցինք Կահիրեի մեր բարեկամներուն: Գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան գործով Աղեքսանդրիա մեկնած ըլլալով, հեռաձայնով խոսեցանք: Սրբազանը ջերմորեն ուրախացավ՝ իմանալով, որ Վահագնի Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի արժանյաց շքանշան շնորհած է պարոն Հրանտ Նասիպյանի՝ Քաղաքական ժողովի ատենապետին: Բարեգործականի Շրջանային վարչության հետ շորեքշաբթի երեկո ժողով ունեցանք՝ Անթիլիասի Դպրեվանքին վերաբերյալ կարևոր հարցի մը շուրջ:

Ուրբաթ առտու պարոն Հ. Նասիպյանի հետ օդանավակայան գացի: Կեսօրն ետք ժամը 2.30-ին հասա Բեյրութ՝ օդի ճամբայով: Խալդեի օդանավակայանը դիմավորության եկած էին գերաշնորհ Տ. Խորեն սըր-

բազան, գերաշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ, հոգեշնորհ Տ. Շահն վարդապետ, հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա և պարոն Հակոբ Պուճիգանյան: Ուղևորվեցանք Անթիլիաս. ահա՛ մեր սիրելի Դպրեվանքը, ուր այնքան աշխատանք թափեր ենք. հոգեկան անասելի հրճվանքով համակվեցա՝ տեսնելով մեր ուսանողները, որոնց համար այնքան հոգներ էի և աղոթեր, որ լեցվին ու աճին ճշմարիտ հավատքով ու գիտութեամբ: Ելա Վահագն ու ողջագուրվեցա բարձրապատիվ Տ. Խաղ և գերաշնորհ Տ. Փառեն սրբազաններուն հետ: Կմտնենք մեր տեսչարանը, ուր բազում գործեր կապասնն մեզի:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, փետրվար, 1954)

